

տեսնել թէ ի՞նչ է արուած այս կամ այն հասարակական հարցը պարզելու կամ իրագործելու համար: Ահա այդ պայմաններում, մանաւանդ, շատ օգտակար կարող է լինել պ. Թումանովի այս գրքոյկը իր համակրելի ուղղութեամբ:

Լ. Ս.

ՁՁ) Կենսագրութիւն Հ. Ալիօանի, Վենետիկ, 1902 թ., գինը 3 ֆրանկ:

Ս. Ղազարի վանքը շտապեց իր մեծ ծերունու կենսագրութիւնը հրատարակել: Այդպէս էլ հարկաւոր էր. Հ. Ալիօանի կեանքը հետաքրքրական և խրատական է շատ կողմերով: Իբրև մարդ, իբրև աշխատող, իբրև դաստիարակ, իբրև մատենագիր նա ունի իրան միայն յատուկ հմայող յատկութիւնները: Հաղուագիւտ են մեզանում այդպիսի դէմքեր, որոնք հիւսուած են մէկը միւսից համակրելի գծերից. ուստի և այդպիսի մի դէմքը պէտք է միշտ կենդանի լինի ամեն մէկի առջև:

Կենսագրութեան ծրագիրը պարզուած է Հ. Ս. Երեմեանի մի փոքրիկ առաջարանի մէջ: «Փոքրիկ հատորիս առաջին մասին մէջ կը ներկայացնենք Հ. Ալիօանի կենսագրութիւնը պարզ պատմական ոճով, երկրորդին մէջ ակնարկ մը կուտանք իր գրական գործունէութեան: Կը փութանք ըսելու որ գործս՝ հոյակապ հանճարին ծովածաւալ վաստակոց ուսումնասիրութիւնը չէ. այլ ժողովրդական գրութիւն մը Նահապետին սիրելի Հայկակներուն և հայրենասէր հասարակութեան համար պատրաստուած»:

Եւ ճիշտ. քննական վերաբերմունք, վերլուծութիւն մենք չենք տեսնում այդ գրքի մէջ: Այդպիսի վերաբերմունք հագիւթ է կարելի լինի սպասել Հ. Ալիօանի պէս մարդու հետ ապրած միաբանակիցներից: Նրանք կարող են միայն երգել իրանց հռչակաւոր Նահապետին, միայն փառաբանել նրան: Ոչ ոք չի ասի թէ նրանք իրաւունք չունեն այդպէս ասելու: Եւ Հ. Ալիօանի կենսագրութիւնը կարգացում է մեծ ախորժակով, ինչպէս նշանաւոր մարդու կեանքի պատկեր: Սակայն ցանկալի կը լինէր որ Հ. Ալիօանի գրական գործունէութեան ուսումնասիրութիւնն էլ տրուէր հասարակութեան: Խոր, ազդու կը լինի այն կենսագրութիւնը, որի մէջ գործիչի գործը պարզուած է, ուսումնասիրուած: Անշուշտ, այդ տեսակ ուսումնասիրութիւն էլ կ'երեւայ մեզանում: Առ այժմ բաւականանանք այս կենսա-

գրութեամբ, որի մէջ պատմուած են նշանաւոր ծերունու կեանքի բոլոր փաստերը:

Հետաքրքրական է Հ. Ալիշանի գրական վաստակների ցուցակը: Այդտեղից տեսնուում ենք թէ ինչ հսկայական դործ է կատարել երախտաւոր ծերունին իր 80-ամեայ կեանքի մէջ: Տպուածները մասամբ ծանօթ են ամենքին: Բայց շատ շատ են և անտիպները, մանաւանդ կիսատները: Դեռ ինչէր պիտի տար մեր աղքատիկ գրականութեան այդ ալիզարդ հսկան, եթէ մահը խլած չը լինէր զրիչը նրա ձեռքից:

Կենսագրութիւնը զարդարուած է բազմաթիւ պատկերներով, տպագրութիւնը մաքուր է, գինը մատչելի: Ամեն ինչ արուած է որ այդ օգտակար գիրքը հեշտ տարածուի: Եւ, ի հարկէ, ցանկալի է որ շատ և շատ տարածուի նա:

Լ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Բժկ. Վ. Արծրունի, Դողէրոցը կամ Մալարիա, պատկերազարդ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 5 կ.
- 2) » » » Ինֆլուէնցա կամ Նոր ցաւ, պատկերազարդ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 3 կ.
- 3) Շ. Արագլիսպիրելի, Դժբաղդ թաթոս, թարգմ. Ա. Բարսամանի, Թիֆլիս, 1902 թ., գինն է 7 կոպ.
- 4) Ս. վ. Պարոնեան, Քաղկեդոնեան ժողով և Հայաստանեայց եկեղեցի, Պարիս, 1902 թ., գինն է 2, 50 ֆր.
- 5) Յ. Եսայեան, Խորտակուած սէր, վէպիկ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 30 կ.
- 6) Էմինեան-Ազգագրական ժողովածու, հատոր Գ. Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ. գրից Հր. Աճառեան, Մոսկուա-Վաղարշապատ, ՌՅՄԱ.—1902:
- 7) Զապէլ Հ. Ասատուր (Սիպիլ), Տօլքեր (ստանաւորներ), Կ. Պոլիս, 1902, գինն է 5 դրչ.
- 8) Յ. Դաղարշեան, Լիակատար բառարան ուղեբեկներից հայերէն, պրակ առաջին, Թիֆլիս, գինն է 1 ու.